

4 Անդ էր այնուհետեւ¹ չարբենալ գինով², այլ առաւելով³ հոգով⁴, եւ պատրաստել զսիրտս երգովք⁵ հոգեւորաւք, ի փառս եւ ի գովութիւն⁶ Աստուծոյ⁷: 5 Անդ կրթութիւն⁸ քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում⁹ գրոց: 6 Անդ քաջալերութիւն¹⁰ յորդորական¹¹ վարդապետութեան¹², առ ի յառաջադեմ ընտրութեանն¹³ պսակահաս¹⁴ քրիստոսադիր կիտին: 7 Անդ եռալ հոգով¹⁵ աստուածապաշտ ծառայութեամբ: 8 Անդ աղաւթք աղերսալիք¹⁶, եւ խնդրուածք հաշտեցուցիչք¹⁷ վասն¹⁸ ամենեցուն կենաց՝ առ մարդասերն Աստուած:

9 Եւ նովին¹⁹ հոգեկրան արուեստին²⁰ հաներ աւուրս բազումս յանապատ տեղիս, մինչեւ ազդ²¹ լիներ յերիցանց՝ իրաց ինչ աւգտակարաց²² եկեղեցեաց կողմանցն²³ այնոցիկ՝ հասանել յաւգնականութիւն շնորհաւքն Բրիստոսի²⁴: 10 Եւ նորա առանց իրիք զբաղելոյ՝ հանդերձ գործակցաւք իջեալ²⁵ ի թիկունս դիպացն պատահելոց, եւ վճարեալ զաւրութեամբն Աստուծոյ, եւ յորդորագոյնս եւ պարարտագոյնս²⁶ եւ անփակ բերանով՝ զվտակս²⁷ վարդապետութեանն ի սիրտս լսողացն²⁸ ծաւալեցուցաներ:

1 *Ճա Ճք* ապա *փիս*. այնուհետեւ

2 *bc Ճա Ճք* գինով

3 *Ճա Ճք* առաւելել

4 *b* հոգով

5 *Ճա Ճք* երգովք / *միւսն*. երգօք

6 *b* ի գովութիւնն / *վ* ի գոհութիւն

7 *Ճա Ճք չիք* Աստուծոյ

8 *b* կրթութիւնն

9 *Ճա Ճք* հոգեպատումս

10 *bc* քաջալերութիւնն

11 *c* յորդորականն

12 *bc* վարդապետութիւնն / *Ճա Ճք* յորդորական լուսաւոր վարդապետութեանն

13 *Ճա Ճք* ընտրութիւն

14 *Ճա Ճք* պսակահամբար

15 *b* անդ առեալ հոգով / *c* անդ առաւելեալ

16 *Ճա Ճք* պաղատանք փարելիք *փիս*. աղօթք աղերսալիք

17 *c* հեշտացուցիչք

18 *bde* եւ վասն

19 *Ճա Ճք* նովին / *միւսն*. նորին

20 *bc Ճա Ճք* արուեստի

21 *bcdվ* ազատ, *փիս*. ազդ

22 *d* օգտակարեաց

23 *Ճա Ճք* տեղիսն. մինչեւ ազդ լիներ իրացն ինչ հոգեւորաց եկեղեցաց / *Ճք* եկեղեցաց / կողմանցն

24 *bc Ճա Ճք* Աստուծոյ *փիս*. Բրիստոսի

25 *bc* իջանել

26 *Ճա Ճք չիք* եւ նորա *բառից միւսն* պարարտագոյնս

27 *bc* զվաստակս

28 *Ճա Ճք* սերմանելեացն *փիս*. լսողացն